ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԻՐԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՐԵԳԱԿ - ԱՂՋԿԱ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՔԱՌՍՈՒՆ ՃՈՒՂ ԾԱՄ ԴԵՂՁՈՒՆԻ ԿԵՐՊԱՐՈՒՄ

«Սասնա ծռեր» էպոսում ժողովուրդն իր սիրելի հերոսներին տվել է համարժեք հատկություններով օժտված կանայք՝ նրանց շնորհելով համապատասխան ֆիզիկական և հոգևոր ունակություններ: Դավիթը հաղթանդամ էր ու հզոր, նրա կին Խանդութի մասին նույնպես կան նման վկայություններ. Հայաստանում շրջագայող 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդներ Անտոնիո Տենրեյրոն և Մեստրե Աֆոնսոն վկայում են, թե լսել են սասունցիներից, որ «նա (Խանդութը) ոտքերին կրել է, ըստ սովորության, ոսկե ապարանջաններ, այնքան խոշոր ու լայն, որ մարդ կարող էր գլխով ու մարմնով դրանց միջով անցնել»[1]: Հսկայականության, գերբնականության այս գաղափարը խիստ անհրաժեշտ է էպոսին, առանց դրա էպիկական ամբողջ գիտակցությունը կփլվի: Հետաքրքիր է, որ ժողովրդական մտածողության մեջ արտասովոր վիթխարիությունը չի տգեղացնում հերոսներին, հակառակը, «Դավիթն ու Խանդութը, Սանասարը և ուրիշները, աշխարհի գեղեցիկներն են»[2]: Քանի որ Սանասարն ինքը գերբնական ծագում ուներ՝ սերել էր ջրից, ապա բնական է, որ նրա կինն էլ օժտված լիներ արտառոց՝ հրաշագործ հատկություններով:

Քառսուն-Ճուղ Ծամ Դեղձունը (հայոցձորցի Թառո Կազարյանի պատմած տարբերակում նրա անունը Սուռաթ է՝ պատկեր) ապրում է կախարդական երկրում՝ Պղնձե քաղաքում, Քաջանց թագավորությունում: *«**Քաջանց երկիր հմայքի երկիր** է»,* օտար երկիր է: Դեղձունը, որոշ պատումներում էլ Խանդութ խանումը, հաճախ հիշատակվում են որպես այլազգիներ. նրանք հայ չեն: «Այս հանգամանքը օտարոտի չպիտի թվա, քանի որ այն դարաշրջանում այլադավան խառնամուսնությունները սովորական էին»[3]: Լսելով հռչակավոր դյուցազունների մասին՝ նա նամակ է գրում (կամ իր պատկերը դնում) և հավք դարձած աղջկա կամ քամու միջոցով ուղարկում Սանասարին՝ առաջարկելով նրան իր ձեռքը. ***«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից շատ բարև Սանասարին. Շատ բարև Բաղդասարին, Սանասարին: Սանասա՛ր տղա, Ես Պղընձե քաղաքի թագավորի աղջիկն եմ: Իմ սիրտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սուրբ է. Իմ գլուխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է. Աստրծու շնորհքով լցուկ եմ: Շատեր էկած են իմ վերա, ինձ ուզելու. Քառսուն տեղե քառսուն մարդ է էկած, Ես խոսք չեմ տվե, ես հա չեմ ա՛սե. Էրազով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ.***

---

[1] Սասնա ծռեր, աշխ. Ս. Հարությունյանի, Ե.,1977, ծան.,էջ 626:

[2] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Ա, Ե., 1966, էջ 403:

[3] Սասնա ծռեր, աշխ. Մ. Աբեղյանի, Կ. Մելիք- Օհանջանյանի, հ. Բ, 2-րդ մաս, Ե., 1951, ծան., էջ 842:

Ինձի շատ դուր կը գաս դու… Արի, ինձի տար քեզ համար»[4]:

Պատումներից մեկում (ասացող՝ մոկացի Սախո, գրառող՝ Ս. Հայկունի) Դեղձունի նամակն ուղղված է Բաղդասարին. **«- Քամի՛, նա թուղթ կը տանըս, Կը տաս իմ տեգր Բաղդասարըն, Գա ձը տանը Սանասարըն…»**[5]: Այստեղ պարզորոշ զգացվում է, որ Քառսուն-Ճուղ Ծամի կերպարի մեջ խտացել են մայրիշխանության ժամանակների տան տիրուհու մի շարք բնորոշ գծեր: Մայրիշխանության շրջանի (ձգվել է հին քարե դարից մինչև զարգացած նոր քարե դար) հիմնական հատկանիշներն են եղել կնոջ գերակա դիրքը տղամարդու նկատմամբ և առաջնային դերը ընդհանուր համայնքում, ամուսնության նախաձեռնումը, որոշ հարցերում կնոջ և տղամարդու իրավահավասարությունը: Գուցե էպոսի այս և ուրիշ հատվածներում պատմվող համանման միջադեպերը պարզապես հուշ են «այն հեռավոր անցյալից, երբ մայր-կինը, իր տոհմի տնօրենը լինելով, ինքն էր վճռում, թե ո՛վ է արժանի իրեն պտղավորելու համար: Մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր համար ամուսին ընտրող կնոջ մասին եղած պատկերացումը պետք է իմաստավորեր նրան թագուհի դարձնելով: Գուցե սրա մեջ է թաքնված այն պատճառը, որ թե՛ Սանասարը, թե՛ Մհերը, թե՛ Դավիթը, թե՛ Փոքր Մհերը ամուսնանում են թագուհիների հետ, որոնց արքայական պալատը իսկույն անհետ չքանում է, հենց որ այդ թագուհիներն ամուսնանում են»[6]:

Դեղձունը չամուսնացած, գերբնական աղոթքներ իմացող կույս է, ինչպես և Սաթենիկ տիկինը, որն օժտված էր կախարդուհու, գուշակուհու հմայական գծերով: Սաթենիկի համար Արտաշեսը ամառանոց է կառուցում և անվանում այն Արտամատ, պատում է ծաղկանոցներով՝ զանազան խոտաբույսերից դեղեր պատրաստելու համար[7]: Դեղձունի (ինչպես նաև Խանդութի, Գոհարի) համար ասվում է, որ նա «իմաստուն կարդացվոր է», ունի գիտելիքներ, որոնք հրաշագործ են դարձնում նրան. «***Դեղձուն աղջիկ կախարդ էր, հմայիչ էր***»[8]: Նման բնատուր (Աստծուց շնորհված) գիտելիքների գոյության մասին է նշում նաև Ալիշանը, երբ խոսում է գերբնական բարի ոգիների կամ հավերժահարսերի մասին: Նրանք հունական նիմֆաների կամ մուսաների նման գիտուններ են, «բնութեամբ ունին, ասեն, զգիտութիւն և ոչ ուսանելովն»[9]:

Հունական էպոսի մեջ Դեղձունը համապատասխանում է Կիրկե դիցուհուն, որը Ոդիսևսի ընկերներին հմայությամբ խոզ է դարձնում: Ոդիսևսին հաջողվում է խուսափել կախարդանքից՝ Հերմես աստծու տված հրաշագործ բույսի շնորհիվ: Այնուամենայնիվ, նա հմայվում է Կիրկեի գեղեցկությամբ, լցվում բուռն սիրով, ինչի արդյուն-

---

[4] Սասունցի Դավիթ: Հայ ժողովրդական հերոսավեպ: Ե., 1981, էջ 54:

[5] Սասնա ծռեր,աշխ. Մ. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, հ. Ա,1939, էջ 319:

[6] **Հ. Օրբելի**,Հայկական հերոսական էպոսը,Ե., 1954, էջ 20,47:

[7] Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**,Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1984, էջ 87:

[8] Սասունցի Դավիթ, էջ 54:

[9] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Ե., 2002, էջ 108:

քում ծնվում է նրա որդի Տելեգոնը[10]:

Ամուսնությունը էպոսում մշտապես առկա թեմա է: Բայց այն կարևոր է վեպի համար ո՛չ հենց հերոսների ամուսնանալու փաստով, այլ ժառանգ ունենալու, սերունդը շարունակելու, Սասնա տան ճրագը վառ պահելու նպատակով[11]: Ամուսնության նպատակով այլ երկիր մեկնող հերոսը առասպելական մտածողության թելադրանքով նպատակին պետք է հասնի միայն վիշապամարտից հետո: Բանագետ Սարգիս Հարությունյանը գտնում է, որ «վիշապամարտը մեծ մասամբ առաջադրվում է իբրև ամուսնության կանխապայման կա՛մ աղջկա կողմից, կա՛մ նրա հոր: Իսկ առանձին դեպքերում վիշապամարտը հենց բուն ամուսնության նպատակն է»[12]:

Արևի մարդակերպ պատկերացումը բազմապիսի դրսևորումներ է գտել ժողովրդական բանավոր ավանդության մեջ[13]: Կարծիքներ կան, որ Դեղձունը վաղնջական ժամանակներում մարդու դիցաբանական պատկերացումների արդյունք հանդիսացող մի հին դիցուհու վիպականացած հետնորդն է: Նա արևի հեթանոսական խորհրդանիշն է, որը հաճախ պատկերվել է կտուցին օղ բռնած թռչունի, մանկան կամ հրեղեն աղջկա կերպավորումներով[14]: Նա, «որպես բաց դեղին մազերով «ակն ու արեգակ» աղջիկ, պարզորոշ կերպով կարող է համարվել արևային մի աստվածության վիպական արտացոլումը, արևի աստծո դուստրը»[15]: Արևային հատկանիշների մասին է խոսում հենց նրա անունը: Ինչպես բացատրում է Մ. Աբեղյանը, Դեղձուն-Ծամ նշանակում է «դեղձանամազ», խարտյաշ: Նա առասպելական կերպար է, «հանդես է գալիս իբրև ամպրոպային վիշապից գերված մի «ակն ու արեգակ» աղջիկ»[16]: Պատումներից մեկում (ասացող՝ քավառցի Դանիել Ղազարյան, գրառող՝ Վ. Տեր-Գրիգորյան) Բաղդասարը կռվի է բռնվում Կրակ Խափուշիկ անունով մեկի հետ, որը, անձը փրկելու հույսով, նրան առաջարկում է իր դստերը՝ Դեղձունին. ***«Աղջիկ մ'ունիմ, անուն Դեղձուն-Ծամ: Արեգական կ'ասա՝ դու մի՛ ելնի, ես կ'ելնիմ ու կամ»***[17]: Առասպելական մտածողության մեջ արևը վիշապի կողմից հափշտակված մի աղջիկ է կամ թանկարժեք ակ: Վիշապը թույլ չի տալիս, որ նա լուսավորի աշխարհը. այն պահում է մշտական խավարի մեջ: Նրան փրկում է ամպրոպային աստվածը կամ վիշապամարտիկը: Դեղձունի կերպարում, ինչպես նրա նախորդի՝ Ծովյան-Ծովինարի կերպարում, պահպանվել են նաև հին, ամպրոպային կռվի մասին առասպելի արձագանքները. իզուր չէ, որ հենց նա՛ է վիշապամարտիկ Սանասարի կինը դառնում: Վիշապի հետ կռվելով արեգակ-աղջկան տիրանալը առասպելական տարածված մոտիվ է, որը հանդիպում է շատ ժողովուրդների մտածողության մեջ: «Արքետիպերը՝ «կո-

---

[10] Տե՛ս **Հոմերոս**, Ողիսական, Ե., 1988, էջ 153:

[11] Տե՛ս **Ա. Սահակյան,** «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Ե., 1975, էջ 105:

[12] Տե՛ս **Ս. Հարությունյան,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 172:

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 43-44:

[14] Տե՛ս **Ս. Հարությունյան**,Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Ե., 2001, էջ 7:

[15] **Ա. Պետրոսյան**, Հայկական էպոսի ակունքները, Ե., 1997, էջ 13:

[16] Սասնա ծռեր, հ. Բ, 2-րդ մաս, ծան., էջ 829:

[17] Սասնա ծռեր, աշխ. Մ. Աբեղյանի, Կ. Մելիք- Օհանջանյանի, հ. Բ, 1-ին մաս, Ե., 1944, էջ 141:

լեկտիվ անգիտակցական», որոշ չափով կենսաբանորեն, գենետիկորեն պայմանավորված սխեմաներ են, որոնց հիման վրա և ձևավորվում են աշխարհի ժողովուրդների՝ իրար այնքան նման առասպելական կերպարները և մոտիվները…»[18]:

Որոշ չափով զուգահեռներ կարելի է անցկացնել հեթանոսական դիցուհի, արեգակ-աղջիկ Դեղձունի և բասկյան ավանդություններում հիշատակվող *լամիների* միջև: Վերջիններս էլ ոսկեծամ, դյութող արարածներ են, և մարդիկ նրանց հաճախ տեսնում են մի բարձր ժայռի վրա նստած, խարտյաշ մազերը սանրելիս[19]: Իսկ վրացական ավանդույթում Դեղձուն-Ծամին համապատասխանում է Դալի դիցուհին, Միհերի զուգորդի՝ Ամիրանիի մայրը: Նա ևս շիկահեր է ու հուր հեր իր մազերով հերոսին կապում է ժայռին[20]: Ի տարբերություն Դալիի՝ Դեղձունի կախարդական ամբողջ ուժն ամփոփված էր ոչ թե արևագույն մազերի, այլ ծովի հատակում ապրող վիշապի բերանում գտնվող թանկարժեք քարի մեջ: «Նա ոչ միայն հմայիչ է, այլև ինքն է հմայված, հմայքի տակ է: Այդ կրկնակի հմայքից ազատում է նրան կայծակի հերոս Ծովային Սանասարը»[21]: «***Ով որ ուժով ըլնի…Ակ վիշապի բերնեն հանի, Թագավորի հետ կռիվ անի, կտրիճ ըլնի,- Աղջիկն իրեն կը տանի*** »,- պատմում է ասացողը[22]:

Քանի որ Սանասարը վիշապամարտիկ է՝ ջրային-ամպրոպային ծագումով[23], ապա աղջկա համար վիշապի հետ նրա կռիվը ուղեկցվում է ամպրոպին, անձրևին մշտապես ուղեկցող կայծակներով, քամիներով, սև-մութ ամպերի կուտակումներով (հմմտ.***«…Էս գիշեր քամի մի փչեց, Մև ամպ մի Սասնա հե՛տ էկավ, Անձրև էնոր մոտեն էկավ, քաղաք թրջեց»***[24]), որոնց գույներն անգամ խորհրդանշական են: Առասպելաբանության մեջ անձրևաբեր ամպրոպային ամպերի սև գույնը (հմմտ. ***«Էն սև պատուհաններ, սև պալատներ կը տեսնե՞ս,- Թագավորի աղջկա քոշք ու սարեն է: Էն սև փարդա է կապած պատուհաններին, Որ աղջիկ դուռ չտեսնի»***[25]) հակադրվում է, սովորաբար, սպիտակ գույնի հետ, սակայն այս դեպքում առկա է նաև *դեղինը՝* արևի գույնը (հմմտ. Դեղձուն-Ծամ անունը), իսկ հնդկական դիցաբանության մեջ Կրիշնայի և նրա կնոջ գույների հակադրությունն է *կապույտ-դեղինը*[26]:

Միայն համապատասխան փորձություններն անցնելուց հետո է (ոսկի խնձորը վայր է բերում, գուրզը տեղից հանում-նետում է հեռու, վիշապի բերանից հանում է ակը, կռվում է 60 փահլևանների հետ, Կանաչ քաղաքն ազատում է աղբյուրի ակը

---

[18] **Ա. Պետրոսյան**, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Ե., 1997, էջ 53:

[19] Տե՛ս Բասկյան ավանդազրույցներ: Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ, 25 հատորով, հ. 3, Ե., 1996, էջ 71:

[20] Տե՛ս **Ա. Պետրոսյան,** Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, ՊԲՀ, 2002,թ. 2, էջ 256:

[21] Սասնա ծռեր, հ. Բ, 2-րդ մաս, ծան., էջ 829-830:

[22] Սասունցի Դավիթ, էջ 68:

[23] Տե՛ս **Մ. Աբեղյան,**Երկեր, հ. Ա, էջ 414:

[24] Սասունցի Դավիթ, էջ 70:

[25] Սասունցի Դավիթ, էջ 68:

[26] Տե՛ս **Ա. Պետրոսյան,** Արամի առասպելը…, էջ 54:

փակած մեկ այլ վիշապից, պատուհասում է Դեղձունին փակի տակ պահող Համդոլ դևին և այլն) Սանասարին հաջողվում խոսել թագավոր-հոր հետ: Անգամ աղջկա հայրը երբեմն վիշապի կերպարով է հանդես գալիս, երբ խոչընդոտներ է ստեղծում Սանասարի համար՝ չկամենալով աղջկան հեշտությամբ զիջել: Դեղձունը «գերի է վիշապի ձեռին, որ հաճախ պատկերանում է կրկնված ձևով…ինչպես աղջկա հայր ու թագավոր (Քաջանց թագավոր, տ. *Քաջանց* բառը), որը չի ուզում ձեռից բաց թողնել իր գեղեցիկ, լուսավոր աղջկան»[27]: Բանահյուսական ստեղծագործություններում հանդիպող հոր այսպիսի վերաբերմունքը աղջկա փեսացուի նկատմամբ բացատրվում է նրանով, որ հորից որդուն անցնող ժառանգությունը ժառանգման ավելի ուշ առաջացած ձև է: Հին (մայրիշխանության) դարաշրջանում իշխանությունը հորից անցնում էր փեսային, այսինքն՝ դստեր ամուսնուն, փոխանցումը տեղի էր ունենում կնոջ միջոցով, ամուսնության ժամանակ (հմմտ. հեքիաթներում տարածված՝ թագավորի աղջկա համար խոստացվող կես կամ ամբողջ թագավորության մոտիվը): Փեսայի նկատմամբ ունեցած վախը՝ որպես հակառակորդի, հանգեցնում է այնպիսի դժվարին խնդիրների, փորձությունների առաջացման, որոնք պետք է հոգեհան անեին ու ընկճեին փեսային[28]:

Երբ Սանասարը վերջապես ազատում է աղջկան՝ նրա հմայքի քարը հանելով վիշապի բերանից. ***«Առավոտուն ինչ լուս բացվավ, Տեսան՝ Դեղձուն-Ծամի պատուհաններ բացվե, Էնոր լուս տվեր է քաղաք»***[29]: Դեղձունը դյութող էր, նրան ուզելու եկած քառասուն երիտասարդները կախարդվել էին նրանից ու դարձել ծերունիներ: «Եթե դա, մի կողմից, գեղեցիկ աղջկա հմայքն է երիտասարդների վրա թափած՝ պատկերավոր արտահայտությամբ, մյուս կողմից, երևան է բերում կախարդության, դյութության հավատքը, որ միշտ եղել է հնուց անտի…»[30]: Հնարավոր է նաև, որ այս դրվագում ասացողները փոխաբերական իմաստ են հաղորդել աղջկա համաձայնությանը մինչև ծերություն կամ մահ սպասել հանձն առնող երիտասարդների՝ բանահյուսական ստեղծագործություններում շատ տարածված մոտիվին (հմմտ. Հ. Թումանյանի «Փարվանա», Ավ. Իսահակյանի «Ասպետի սերը» լեգենդները):

Ի տարբերություն Փարվանա տիրուհու՝ Դեղձունը կատարել է իր ընտրությունը. նա սիրահարված կնոջ խոսք է ասում իր հետևից եկած Սանասարին. ***«-Չիկ ջան մը կա՝ քրո ուղուրին ի: Ես քե կանչեցի, բիրի, որ խետ քե գա՛մ»***[31]: Սանասարը պահանջում է հանել կախարդանքը 40 ծերունիների վրայից, ապա ասպետին վայել կեցվածքով առաջարկում է նրանց իր հետ գոտեմարտի բռնվել, քանի որ նրանք էլ եկել էին Դեղձունի «ապով»: Բայց 40 երիտասարդները հրաժարվում են: Նույնիսկ այդ դեպքում Սանասարը նրանց հոժարությունն է ակնկալում. ***« -Այ կարիբ աղբերներ, Դուք հոժար կ'ըլնի՞ք՝ ես աղջիկ տանեմ, Էդոր հետ կյանք վայելեմ: Էնոնք դարձան, ա-***

[27] Սասնա ծռեր, հ. Բ, 2-րդ մաս, ծան., էջ 872:

[28] Տե՛ս **В. Я. Пропп,** Фольклор и действительность, М., 1976, с. 264, 266.

[29] Սասունցի Դավիթ, էջ 70:

[30] Սասնա ծռեր, հ. Բ, 2-րդ մաս, ծան., էջ 829-830:

[31] Սասնա ծռեր, հ Բ, 2-րդ մաս, էջ 565:

սին.- Տա՛ր, բարի տեսնես մոտեն. Շնորհավո՛ր ըլնի, բարով վայելես»[32]: Դեղձունը Սանասարի համար դառնում է արժանի, սիրող ու հավատարիմ ամուսին (այս գիծն էպոսում ձգվում է մինչև Արմաղան, Խանդութ և Գոհար):

Սյուժեի հետագա զարգացումներում Դեղձունի կերպարում որակական նոր փոփոխություններ են ի հայտ գալիս: Երբ մահանում է Սանասարը, Սասնա տան հոգսն իր վրա է վերցնում Դեղձունը և Քուռկիկ Ջալալուն հեծած՝ հսկում է իր տիրույթները. ***«Մարդ տի էն գախ թամաշ աներ զինք ու իր ձին»***[33]: Իսկ երբ «էրթումկոտր» լինելով մեռնում է Մհերը. «***Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն, Մհերի մեռնելեն հետև սուգ մտավ. Մտավ յոթ դռների հետև, Փակվեց մեկ սենեկի մի մեջ, Որ արև իր գլխուն չ'առներ, Էնտեղեն արև լուս չ'էլներ, Չուր նոր մանուկ մեծանար՝ Մհերի տեղ բռներ»***[34]:

Անանուն պատմիչը մեզ ավանդել է Արծրունյաց տեր Գրիգոր-Դերենիկի սպանության պատմությունը և նրա տիկնոջ խոր վշտի բարձրարվեստ նկարագրությունը: Նրա կինը՝ Արծրունյաց տիկին Սոֆին, վարվում է ճիշտ ինչպես Դեղձունը: «Իսկ երբ ստուգվեց կատարվածը ու ճշտվեց կորստյան լուրը, ապա տիկինն ընկավ ցած և երեսը դրեց գետնին, մոխիր ցանեց գլխին, և պալատի օդը պատեց ձեռագործ խավարը: Դեն գցեց իր պատվական, մարգարտահյուս զարդաքողը, հագավ սև զգեստ և պատրաստեց թխակերպ ծածկոց՝ իր գլխին գցելու համար… Սենյակների դռներից վերցրեցին ոսկեհուռ, երկնակամարի գույնի գործվածքները և փոխարենը բերեցին սև, ավելի կոշտ ու հույժ տխրալիները: Լաց ու կոծ անողների սպասավորները տիկնոջ հրամանով այս ու այն կողմ ընթանալով, խցեցին հրաշակերտ ապարանքի լուսանցույց պատուհանները. «Որպեսզի,-ասում է,- արեգակը երկնակամարի անհաս բարձունքներում ճեմելիս, իր ճառագայթները ցած չգցի, չլուսավորի իմ խավարը…մինչև որ Աստված իմ որդիներից մեկին կդարձնի հոր պես այրասիրտ…»[35]:

Այսպիսով, Դեղձունը վաղնջական ժամանակներից մեր նախահայրերի մտածողության մեջ մնացած հեթանոսական «ակն ու արեգակ» դիցուհու մարմնացումն է՝ որպես արևի խորհրդանիշ: Նա նաև հերոսական գերդաստանի արժանի մայրն է, որը կապում է առաջին սերունդը երկրորդ և երրորդ սերունդների հետ, Սասնա տան մասին հոգ տանող Մեծ տիկինը, որը դժվարին պահին կարող է հանձն առնել կնոջ համար ծանր մի պատասխանատվություն, ինչից խուսափեցին Սանասարի ավագ որդիները՝ տեր կանգնել հայրենի ժառանգությանը, դիմադարձել թշնամուն և կառավարել երկիրն արդարությամբ: Ժողովրդական մտածողության մեջ նա այնքան յուրային է ու հարազատ, որ Վասպուրականում նրա կերպարը զուգադրվել է ժողովրդի կողմից անչափ սիրված Արծրունյաց տիկնոջ՝ Սոֆիի հետ՝ օժտելով նրան, բնականաբար, նաև վիպական-առասպելական կերպարին բնորոշ շատ հատկություններով:

---

[32] Սասունցի Դավիթ, էջ 88:

[33] Նույն տեղում, էջ 93:

[34] Նույն տեղում, էջ 124:

[35] **Թովմա Արծրունի** և **Անանուն**, էջ 415: